ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների և տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 31-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-4» պայմանագրում 2024 թվականի մարտի 20-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 31.01.2024թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-4» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» «03» 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Անի Մանուկյան Արմենի Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 31.01.2024թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-4» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***Անի Մանուկյան Արմենի Ա/Ձ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ Արարատի մարզ, Այնթափ, 11 փող, 25 տուն
	ՀՎՀՀ՝ 26039963
ՀՎՀՀ՝ 02583241	Հ/Հ՝ 2051232155141001
Հ/Հ՝ 900011192151	«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Տիգրան Մեծ» մասնաճյուղ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
Ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյան	Տնօրեն Ա. Մանուկյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 20 » « 03 » 2024թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 3
« 31 » « 01 » 2024թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-4» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39831245/2	Օճառ, հեղուկ	78 840	78 840	78 840	122 640	122 640	122 640	175 200	175 200	175 200	**175 200**
5	39831276/2	Զուգարանների մաքրման նյութեր	140 400	140 400	140 400	218 400	218 400	218 400	312 000	312 000	312 000	**312 000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Անի Մանուկյան Արմենի Ա/Ձ
Հասցե՝ Արարատի մարզ, Այնթափ, 11 փող, 25 տուն
ՀՎՀՀ՝ 26039963
Հ/Հ՝ 2051232155141001
«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Տիգրան Մեծ» մասնաճյուղ

Տնօրեն Ա. Մանուկյան

/ստորագրություն/
Կ.Տ